Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեման	Մարդու կյանքի և արժանապատվության կարևորումը Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքում
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող	Սուսաննա Մկրտչյան Սերյոժայի Հայոց լեզու և գրականության ուսուցչուհի 055 514614 susannamkrtchyan55555@gmail.com

Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● Էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	Վ. Տերյանի անվան թիվ 60 հիմնական դպրոց Տիգրան Մեծ 42 010-550070 teryan60@mail.ru

Ներածություն **3**

Հիմնական բովանդակություն **4**

Եզրակացություններ, առաջարկություններ **5**

Օգտագործված գրականության ցանկ **6**

Հավելվածներ **7**

Ներածություն

Նպատակ	**Թեմայի ուսումնասիրության ընթացքում աշակերտների մեջ ձևավորել բարոյական պատասխանատվության գիտակցություն, արժանապատիվ ապրելու կարողություն և զարգացնել նրանց համեմատական-վերլուծական միտքը**
Հետազոտական հարց	**Ի՞նչ մեթոդներով կարելի է սովորողներին տեսանելի դարձնել մարդու կյանքի և արժանապատվության հանդեպ անտարբերությունը Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքում (7-րդ դասարան:)**
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	**1) Սովորել սովորելու կարողունակություն** **2) Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն**

Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	**7-րդ դասարան** **13 աղջիկ** **12 տղա**
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	**Դիտարկում**
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	**4 դասաժամ**

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	1. Գ. Հովսեփյան «Գրական դիմագծեր», Երևան, 1981 թ., 2. Սերգեյ Սարինյան «Սերունդներ և ավանդներ», Երևան, 1984 թ., 3. Ա. Արզումանյան, «Գրականության դասավանդման մեթոդներ, ձևեր», Երևան, 2014 թ.
Հետազոտության ընթացքը	Դերենիկ Դեմիրճյանը հայ գրականության ականավոր դեմքերից է: Մեծ է նրա վաստակը հայ արձակի բնագավառում: Անցյալ դարի սկզբին նա գրեց մի քանի պատմվածքներ, որոնք նոր խոսք էին հայ արձակի փոքր ժանրում: «Ստամոքս», «Ավելորդը», «Տերտերը», «Ժպիտը» և այլ պատմվածքներում հեղինակը քննում է կյանքի փաստերն ու ցավոտ երևույթները՝ գնալով դեպի հոգեբանական վերլուծություններ: Նա արտացոլում է այդ ժամանակաշրջանի մարդկային կյանքի մեծ նպատակը՝ գլխավոր հերոս դարձնելով նյութական

և սոցիալական հարաբերությունների ճնշման տակ գտնվող սովորական մարդուն:

Սեփականատիրական փոխհարաբերությունը մարդուն դարձրել է ժլատ, չար, եսամոլ, ընչաքաղց: Համաշխարհային գրականության նշանավոր դեմքերը՝ Շեքսպիր, Մոլիեր, Բալզակ, Գոգոլ, Զոլա և ուրիշներ, ստեղծել են բազմաթիվ երկեր, որոնց հերոսների (Գոբսեկ, Շեյլոկ և այլն) ապրելակերպը ոչ այլ ինչ է, եթե ոչ սեփականության մոլեգին կրքերի արտահայտություն:

Տարբեր ժամանակահատվածում հայ գրականության մեջ ևս ստեղծվեցին նմանատիպ երկեր. Շիրվանզադեի «Քաոս», «Պատվի համար», Պ. Պռոշյանի «Հացի խնդիր», «Ցեցեր» և այլն:

Դեմիրճյանի արձակի հերոսը տարբերվում է մյուսներից:Նա նոր գույներով ու հոգեվիճակներով է քննում իր հերոսների գործունեությունը:

Դեմիրճյանի ստեղծած կերպարների մասին իր ուրույն բնութագրությունն է տվել հայ գրականության մեկ այլ հսկա՝ Ավ. Իսահակյանը՝ գրելով. «Նա հոգեբանական անալիզի վարպետ է, ունի դիտող սուր աչք, թափանցող

միտք, օժտված է հումորով, նրա լեզուն յուրահատուկ է՝ անհատական մի ոճ, որ գեղեցիկ է ինքնին՝ հարուստ ինքնուրույն պատկերներով, անսպասելի մետաֆորներով, թևավոր դարձվածքներով: Այս բոլորը որոշ չափով նոր գեղեցկություն են բերում մեր գրական ոճի մեջ»:

«Ավելորդը» պատմվածքը Դերենիկ Դեմիրճյանը գրել է 1916 թվականին: Եվ կային ժամանակներ, որ այս պատմվածքի վերաբերյալ բարձր գնահատականներին զուգահեռ հնչել են նաև գռեհիկ վերլուծություններ, ակնարկներ, թյուրըմբռնումներ:

Նմանատիպ գնահատականներին վերջ է տվել նույն Ավ. Իսահակյանը՝

«Ավելորդը» համարելով ոչ միայն Դեմիրճյանի ատեղծագործության գլուխգործոցներից մեկը, այլև՝ «Ավելորդը» մեծ պատմվածք է, իր տեսակի մեջ միակը մեր գրականության մեջ: (Գ. Հովսեփյան, գրական դիմագծեր, 1981թ. Երևան, էջ 19):

Դեմիրճյանն ուներ սեփական դիտարկումը իր արվեստի վերաբերյալ : Նա գրել է. «Այդպես եմ ես հասկացել մարդու պրոբլեմը գրականության մեջ»: Եվ առաջնորդվել եմ հումանիզմի գաղափարով, այդպես

եմ ես հասկացել իմ ուսուցիչներին՝ Շեքսպիրին, Գյոթեին, Տոլստոյին, Գոգոլին և նմաններին: Գրելով «Ավելորդը» ես սուբյեկտիվորեն գրում էի մարդկանց մասին: Հաճի աղան վաճառական չէր, բուրժուազիայի ներկայացուցիչ չէր, այլ մարդ՝ իր բարոյական այլանդկությամբ և խղճի գույներով: Սրբունը մարդ էր իր վեհությամբ>>: (Սերգեյ Սարինյան, սերունդներ և ավանդներ>> էջ 239, Երևան, 1984թ.):

Իմ հետազոտության վերնագիր ընտրելով «Մարդու կյանքի և արժանապատվության կարևորումը «Ավելորդը» պատմվածքում՝ ձեռնամուխ եղա ստեղծագործության դեմքերը, դեպքերը, իրադարձությունները, հոգեբանական անցումներն ու զգացումները ներկայացնելու հանրակրթական դպրոցի յոթերորդ դասարանի աշակերտներին:

Խորությամբ և հանգամանալից ուսումնասիրելով պատմվածքը և աշակերտների հետ նախնական զրույց վարելով պատմվածքի բովանդակության վերաբերյալ՝ եկա այն եզրակացության, որ ժամանակակից ուսուցման գործընթացում կարևորվում է հետազոտական մեթոդների կիրառումը, որտեղ մեծ տեղ է կազմում

	աշակերտի ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը: Հաշվի առնելով այս ամենը՝ պատմվածքի ուսուցման համար նպատակահարմար գտա կիրառել ուսուցման երկու մեթոդ՝ համագործակցայինը և գրական դատը: Համագործակցային ուսուցման հիմքում ընկած է խմբային եղանակը, որն ունի հետևյալ առանձնահատկությունները. ա) սովորողները բաժանվում են ուսումնական խմբերի, որոնց կազմը հաստատուն է, միատարիք, բ) ուսումնական խմբի բոլոր մասնակիցները նույն ժամանակահատվածում ուսումնասիրում են նույն թեման, նույն հարցը նույն ձևով, գ) խմբի բոլոր անդամների համար սահմանվում է թեմայի ուսումնասիրման նույն հաջորդականությունը: Համագործակցային մեթոդով դասը վարելու համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը կարողանա՝ ա) ապահովել բոլոր աշակերտների մասնակցությունը դասապրոցեսին, բ) ստեղծել քննարկման բովանդակությանը համապատասխան իրադրություն և այդ իրադրության վերլուծության

միջոցով կազմակերպել քննարկվող հարցի մեկնաբանություններ,

գ) ապահովել բովանդակային կոնֆլիկտների առկայություն,

դ) ապահովել բոլոր աշակերտների՝ դասապրոցեսի ընթացքի, ստեղծված իրադրության և քննարկվող հարցի շուրջ շահագրգիռ և գործունյա վերաբերմունք:

Դասի սկզբում մինչև աշակերտների խմբերի բաժանվելը ես ներկայացրի քննարկվող հիմնական հարցը.

Մարդու կյանքի կարևորումը և արժանապատվության դրսևորումը պատմվածքում

Համառոտ ներկայացնելով **պատասխանատվություն**, **արժանապատվություն** բառերի բառարանային իմաստները՝ իմ խոսքում ընդգծեցի, որ պատասխանատու լինել նշանակում է լիազորություններիդ սահմաններում հաշվետու լինել արարքներիդ, գործունեությանդ, նրանց արդյունքի, ինչպես նաև՝ անգործությանդ համար: Հիշեցրի նաև, որ անպատասխանատվությունը ծնում է հանցագործություն: Եվ պատմվածքում ներկայացված բոլոր հերոսները, բացի Սրբունից,բնականաբար, ունեն

պատասխանատվության իրենց չափը կատարված հանցագործության մեջ:

Առաջարկեցի խմբերի պայմանական անունները՝ իրենց քննարկման հարցերով:

Դրանք են ՝

1. **Հաճի աղայի պատասխանատվության և արժանապատվության դրսևորումները**

2. **Հաճի աղայի կնոջ պատասխանատվության և արժանապատվության դրսևորումները**

3. **Հաճի աղայի տղաների, հարսների պատասխանատվության և արժանապատվության դրսևորումները**

4. **Սրբունի պատասխանատվության և արժանապատվության դրսևորումները**

(Ստորև նպատակահարմար ենք համարում ներկայացնելու մեկ դասի կառուցվածք՝ իր բաղադրիչներով:)

Դասարանը չորս խմբի բաժանելուց հետո ներկայացրել եմ աշխատանքների սխեման և դասի կառուցվածքը:

Ուսուցչի ելույթ

Աշխատանք խմբերում

1	2	3	4

Համախմբային քննարկում

Ուսուցչի եզրափակիչ ելույթ և դասապրոցեսի վերլուծություն

Նախ տրամադրել եմ ժամանակ, որպեսզի աշակերտներն իրենց խմբերում ընթերցեն պատմվածքն ամբողջությամբ: Հանձնարարել եմ , որ յուրաքանչյուր խումբ պատմվածքից հակիրճ գրառի հիմնական հարցին վերաբերող հատվածներ:

Երբ խմբերը ավարտեցին ընթերցումը և գրառումները, բացատրեցի յուրաքանչյուր խմբի աշխատանքների կազմակերպման ձևերը, խմբում աշակերտի գործունեության տեսակները **(5 րոպե):**

Այնուհետև աշակերտները սկսեցին աշխատանքները խմբերում: **(15րոպե)**

Յուրաքանչյուր խումբ քննարկում է իր խմբին վերաբերող հարցը:

Խմբերում աշխատանքները սկսվելուց հետո շրջել եմ խմբերով, վերահսկել նրանց աշխատանքը, ոգևորել,

սովորեցրել համագործակցության հմտություններ, ճիշտ կողմնորոշվել քննարկվող հարցի վերաբերյալ նրանց կարծիքը:

Քննարկումից հետո յուրաքանչյուր խմբում ձևավորվել է հիմնական կարծիք, վերաբերմունք, որը համախմբային քննարկման ժամանակ ներկայացրել է խմբի անդամներից մեկը:

Համախմբային քննարկում (15-20 րոպե)

Համախմբային քննարկման ժամանակ խմբի ներկայացուցիչը խոսեց իրենց խմբի կատարած աշխատանքների մասին:Նա տեղեկացրեց, որ խումբը Հաճի աղայի գործունեությունը բաժանել է երեք մասի:

Առաջին մասում բնութագրեցին Հաճի աղային մինչև թուրքերի՝ քաղաք մտնելը:

Հաճի աղան հաջողված վաճառական էր, քաղաքում հայտնի էր որպես մեծ գերդաստանի տեր մարդ:

Բացի դրանից նա ընգծեց, որ Հաճի աղայի տանն էր ապրում և նրա խնամքի տակ էր նաև անդամալույծ քույրը՝ Սրբունը:Ելույթ ունեցողը նշեց, որ ժամանակին անդամալույծ քրոջը իր տուն բերելով՝ Հաճի աղան լուծեց

երկու խնդիր. նախ՝ հարազատ քրոջը անտեր չթողնել, երկրորդ՝ բարձրացնել է արժանապատիվ մարդու իր անունը:

Խումբը իր աշխատանքի երկրորդ մասում քննարկեց Հաճի աղայի գործունեությունը, երբ թուրքերը պետք է մտնեին քաղաք:

Ելույթ ունեցողը նշեց, որ Հաճի աղայի մոտ արթնացավ շահամոլի, շուկայի մարդուն բնորոշ անմարդկային բնազդը. սեփական ունեցվածքը պահպանելու համար բախտի քմահաճույքին թողեց անդամալույծ քրոջը՝ նրան անվանելով «ավելորդ»: Նա, չմտածելով հետևանքների մասին, առանց խղճի խայթի խաբեց

և՛ ընտանիքի բոլոր անդամներին,

և՛ իրեն: Խումբը աշխատանքների երրորդ մասում քննարկեց Հաճի աղայի գործունեությունը քաղաքից թուրքերի գնալուց հետո: Նշվեց, որ երբ վտանգ էր սպառնում Հաճի աղայի ունեցվածքին, նրա եսին, նրա մոտ արթնանում էր եսամոլությունը, շահամոլությունը, անսիրտ վերաբերմունքը հարազատ քրոջ նկատմամբ: Բայց երբ կյանքը մտնում է բնական հունի մեջ, Հաճի աղան սկսում է մտածել իր արածի մասին: Այժմ նա չունի արժանապատվություն

	ո՛չ իր տանը, ո՛չ իր շրջապատում և ո՛չ էլ հարազատ քաղաքում: Ակամայից նա դառնում է չարագործ, և նրա տառապանքները, տանջող մտքերը հանդիպում են մի կետում: «Աստծո առաջ հավասար են բոլորը, ավելորդ չկա»: Սրանք նրա վերջին խոսքերն են: Ներկայացնելով այս ամենը՝ նշվեց, որ խումբը եկել է այն եզրակացության, որ Հաճի աղան որքան էլ նվիրատվություններ անի աղքատներին, եկեղեցուն, այնուամենայնիվ զուրկ է մարդկային բարոյական հատկանիշներց. իր շահը, ունեցվածքը, եսը վեր դասեց մարդկային կյանքից : **Ուսուցչի եզրափակիչ խոսքը և դասապրոցեսի վերլուծություն (5 րոպե)** Եզրափակիչ խոսքում շնահակալութոյւն հայտնեցի դասարանին համագործակցային մեթոդով հաջողված դասի անցկացման համար, ընդգծեցի նրանց ակտիվությունը, խոսելու, արտահայտվելու, սեփական կարծիքը հայտնելու պատրաստակամությունը: Միասին նշեցինք նաև բացթողումները, թերությունները և հաշվի առնելով, որ առաջին դասն էր, որեշեցինք հաջորդ դասերին նվազագույնին հասցնել դրանք:

Վերլուծելով դասը՝ ես եկա այն մտքին, որ համագործակցային մեթոդով անցկացված դասը հնարավորություն տվեց մանրամասնորեն ընթերցել պատմվածքը և ուսումնասիրել բարձրացված հարցերը:Աշակերները հարցերը քննարկեցին համագործակցաբար, ուշադիր լսեցին ընկերների կարծիքները, վերլուծաբար քննադատեցին վատը, չարը, անընդունելին:Ամեն ինչից զատ վեր դասեցին մարդու կյանքը և արժանապատիվ ապրելու գաղափարը:

Ուսուցման հաջորդ մեթոդը, որը ես կիրառեցի դասարանում, «գրական դատ» մեթոդն է: Այդ մեթոդը արդյունավետ է և հետաքրքիր:Այն նպաստում է աշակերտի բանավոր խոսքի զարգացմանը, համեմատական-վերլուծական մտքի ձևավորմանը, մարդկային հարաբերությունների ճիշտ արժևորմանը, ինքնուրույն եզրակացություններ կատարելուն:Գրական դատ մեթոդը իր ձևով նման է իրավական դատին:Այստեղ ևս պետք է լինեն դատավոր, դատապաշտպան, մեղադրյալներ, մեղադրողներ:Կիրառում եմ այս մեթոդը, որպեսզի աշակերտները Հաճի աղայի կերպարում տեսնեն խղճուկ հոգու տեր անձնավորության, որը չունի պատասխանատվություն մարդու կյանքի և արժանապատվության հանդեպ:

Հաշվի առնելով այն, որ համագործակցային դասի ժամանակ աշակերտները ընթերցել են

	բնագիրը, դասը սկսեցինք դերերի բաշխումից և դասարանի կահավորումից:Դատավորի դերում ընտրվեց դասարանում վստահելի և առավել հարգանք ունեցող աշակերտը: Մեթոդի կիրառման ժամանակ ապահովում եմ դասարանի արտաքին ձևավորումը, դատավորի հագուստը, աշակերտների արտաքին տեսքը: Մեղադրող կողմը պահանջ է ներկայացնում օրենքի ամբողջ խստությամբ պատասխանատվության ենթարկել Հաճի աղային՝ սեփական անձը ու ինչքը փրկելու համար ընտանիքի անդամին ոսոխի ձեռքը տալու մեղադրանքով:Հաճի աղան փորձում էր արդարանալ՝ ասելով ,որ իրավիճակը օրհասական էր. թուրքը ուր որէ պիտի մտներ իրենց քաղաք, ինքը պիտի փրկեր իր ունեցվածքը. «Թեկուզև ստորանալ, բայց փրկել այդ կարևորագույնը՝ իր տունը, իսկ եթե այդ չեղավ՝ իր անձը», «և հրդեհի մեջ պաշարվածի նման նա զգաց, որ տարերային մի ուժ նրան մի բան է թելադրում, փախչել.... Մնացաը՝ երեխա, կին, բարեկամ, նսեմացավ նրա աչքում»: Հաճի աղան փորձում էր հավատացնել, որ ինքը երկար տառապանքներ է կրել և որպեսզի ապաշխարի իր մեղքի համար, քսակով փող է տվել տերտերին և ասել. «Ադ ա տուր աղքատներուն, ավելորդին հոգուն համար»:

Փատաբանը փորձում էր պաշտպանել Հաճի աղային, որ իր պաշտպանյալը միմիայն գոյաբանական խնդիր է լուծել՝ փրկելով ընտանիքի մյուս անդամներին, իհարկե չուզենալով, անդամալույծի կյանքը վտանգել:Հաճի աղան հույս է փայփայել, որ իրբ թշնամին խիղճ կունենա, կխնայի քրոջը, իսկ մեղադրողը հիմնավորեց, որ պատերազմի ժամանակ խղճմտանքի պատրանքները արդարացված չեն:

Դատավարության ընթացքում ինքնուրույն ու համարձակ դատողություններով աչքի ընկան բոլոր աշակերտները:

Վերջում դատավորը կայացրեց իր խիստ դատավճիռը, որը արժանացավ աշակերտների հավանությանը:

Գրական դատը մարմնավորող աշակերտները, ինձ թվում է, հնարավորինս մտել էին իրենց կերպարի մեջ, կարողանում էին վերլուծել, քննադատել հերոսներին և նրանց արարքները:Աշակերտները դատապարտեցին Հաճի աղայի մարդ տեսակը, ընդծեցին նրա եսամոլությունը, ընչաքաղցությունը և անտարբերությունը մարդու կյանքի հանդեպ: Աշակերտները նշեցին, որ առատաձեռնությունը և սեփական մեղքի խոստովանությունը բավարար չէին փրկելու մարդու հոգին:

Նրանք իրենց դատողություններում անկեղծ էին, անմիջական:

	Աշակերտները իրենց խոսքում հատկապես նշեցին, որ անդամալույծը ևս մարդ է, հասարակության լիիրավ անդամ և պետք է միշտ լինի մեր ուշադրության կենտրոնում

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Դիտման մեթոդով անցկացված դասերի արդյունքում ես եկա այն եզրակացության, որ աշակերտները լիարժեք արտահայտեցին իրենց դիրքորոշումը՝ ձևավորելով վերաբերմունք գլխավոր հերոսի գործողությունների հանդեպ: Աշակերտները նշեցին, որ Հաճի աղան, լինելով արժանապատիվ անձ և միաժամանակ հաճի, իր խղճի և քրիստոնեական հավատի հանդեպ գործեց հանցանք՝ խուսափելով բարոյական պատասխանատվությունից՝ ոտնահարելով ստանձնած պարտավորությունները: Տրվելով նյութապաշտությանը՝ նա իրեն և ընտանիքին նետեց փրկության անորոշ ճանապարհ: Աշակերտները միակարծիք էին, որ հետագա օրերին նրա հոգեբանական կործանումը սպասելի էր: Կորցնելով բարոյական դեմքը՝ ավելորդ դարձավ հենց ինքը՝ Հաճի աղան:Ժամանակավրեպ էին ուշացած զղջումներն ու ապաշխարանքները. ոսկիներ բաժանելով չես փրկվի գահավիժումից: Եզրակացությունը միանշանակ էր. հարազատին բախտի քմահաճույքին թողնելը հանցագործություն է, բարոյազրկում և անկում, նյութապաշտ մարդու վախճան:

Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ուսումնական գործընթացի կազմակերպման արդի մոտեցում, կոլեկտիվ ուսումնական պարապմունքներ, ձեռնարկ ուսուցիչների համար, Օ. Դուդումյան, Ա. Բալայան, Երևան, Ասողիկ, 2020 թ.**
2. **Քաղաքացիական կրթությունը 7-րդ դասարանում, ձեռնարկ ուսուցչի համար, Մ. Մկրտչյան, Ս. Ռաֆայելյան, Գ. Զարգարյան, Ա. Վարդանյան, Ս. Մկրտչյան, Գ. Հարությունյան, Կ. Պողոսյան, Վ. Գրիգորյան, «Մանկավարժական նախաձեռնություն», հայկական ասոցացիա, Երևան, 2000 թ.**
3. **Սովետահայ գրականության պատմություն, Հրանտ Թամրազյան, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1994 թ.**

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ